**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ**
**ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 31.07.2025թ. հ. 179-2025թ. գրության՝ Աբովյան փողոցում կատարված երթևեկության փոփոխության արդյունքում, զբոսաշրջային ծառայություններ մատուցող մեքենաների կայանման հարցի վերաբերյալ, տեղեկացվում է.

տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով ս.թ. հուլիսի 23-ից Աբովյան փողոցում կատարվել է երթևեկության կազմակերպման փոփոխություն՝ Աբովյան փողոց-Հյուսիսային պողոտա խաչմերուկից մինչև Հանրապետության հրապարակ ուղղության աջ կողմում, ինչպես նաև Աբովյան և Բուզանդի փողոցների խաչմերուկից մինչև Հանրապետության հրապարակ ուղղության ձախ կողմում, արգելվել է մեքենաների կանգառ կայանումը: Երթևեկության փոփոխությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Պուշկին-Աբովյան և Աբովյան-Բուզանդ փողոցների խաչմերուկներում գործարկվել են լուսացուցային օբյեկտներ: Նշված ճանապարհահատվածները, որպես կայանատեղիներ առանձնացված չէին զբոսաշրջային ծառայություններ մատուցող տրանսպորտային միջոցների համար և այդ մեքենաները կայանվում էին ընդհանուր հիմունքներով:

Ձեր կողմից առաջարկվող՝ Ստ. Զորյան և Նալբանդյան փողոցների համապատասխան ճանապարհահատվածներում տրանսպորտային միջոցների կանգառ կայանումն արգելված չէ, ուստի ընդհանուր հիմունքներով կարող են կայանվել նաև զբոսաշրջային ծառայություններ մատուցող մեքենաներ: Զբոսաշրջային մեքենաները կարող են կայանել դրանց կանգառ կայանումը թույլատրվող այլ ճանապարհահատվածներում ևս, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջային կոմիտեի (հանդիսանում է ոլորտը կարգավորող մարմին) առաջարկով Երևանի քաղաքապետարանի կողմից զբոսաշրջային մեքենաների համար առանձնացված ավտոկայանատեղիներում, մասնավորապես Հանրապետության հրապարակի՝ ԱԳՆ նախկին շենքի հարակից ճանապարհահատվածում, Մատենադարանին հարակից՝ Կորյունի փողոցում, Սպենդիարյան փողոցում՝ «Կազիրյոկ» սրճարանին հարակից ճանապարհահատվածում, Զաքյան փողոցում և Աբովյան պուրակում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ